Էսաց.—Մարէ, էդա .ազգ, էսաց, խաստակուղ[1]) ազգ ի, մի գլխուն բալայ [2]) տ'ըլնը, էսաց, էլ վըջ[3]) չ'կըտրը, ինկիր ինք մէջ իլի, էնու խոր մալ շատ ը, կինա մէկ բեռ մեղը կ'բիրիս, մէկ բեռ էլ կարագ. կ'բիրիս էստեղ, կ'շինիս եղը մեղը, կ'տաս՝ տղէն կ'ուտը. մինք էլ պարզիրիս էնունց բալից պրծնինք, էնունք բալայ ին։

Էսաց.—Ո՛րտի, Մ՛ելիք, ի՞նչ բալայ տ'ըլնին, էսիկ քի ախպէր տ'ըլնը։

Էսաց.—Էդիկ ձը ախպէր չ'ըլնը, ինչ զարարա[4]), ինչ վնաս ընձը ուրտը[5]), ըդուր մօտէն տ'ըլնը։

Մսրամելիքի մէր ճամբէից, էպի մէկ բեռ մեղը, մէկ կարագ. մեղրով կարագեով էդա տղէն կիրըցուց, պախից մինչիւ իրիք տարի։ Իրիք տարով յիտ տղէն էլաւ, մեանչ քեաղքին կան կ'կեայ։ Էտուր էրած բան ի՞նչ կը. մեանչ քեաղքին կան կ'կէր, ինչքանդար ուԹ տարեկան, տաս տարեկան տղայ կէր՝ կ'առնէր խատ ուր, կ'երԹէր խաղ էնիլիւ։

Տիր ըմ էլ կեացին ճան[6]) կ'խաղին տաս տաս'ւերկու տղի խիտ, տղէք տաս տարեկան ին, ուԹ տարեկան ին, զինք իրիք տարեկան ի. ճանի վերայ կուրտան, վիր Թիւ[7]) էտու ձեռ, Թիւքիր Թռան, վիր վուտքիր իտու, վուտքիր կուտրան. իրիք տղի Թիւ Թռաւ, իրիք տղի վուտ կուտրաւ։

Էլան, դարձան տուն, գանգատ էրին իրանց խուր, մոր ասին. —Մէկ հեԹըմ տղայ կայ Մսրամելիքի տուն, էնիկ էրաւ, որ մե վուտքիր կուտրաւ, մի Թիւքիր Թռաւ։

Էդունց խէրիր կեացին մատ Մսրամելիք գանգատ էրին. Մըսրամելիք շատ ըռըկաւ, էլաւ ձեռ էտու տղէն, տ'սպանէր. մէր չ'իԹուղ, ըսաց.—Տղայ ի, բանը ֆէմ[8]) չ'էնի։

Էդ օր էդենց ընցաւ։

---

[1]) Հաստակող, յամառ։ [2]) ԽաԹայ, պատիժ։ [3]) Ճար չ'կայ։ [4]) Վնաս։ [5]) Հասնի, լինի։ [6]) Վէգ ոսկորը։ [7]) Թև։ [8]) Խելքը բան չի կտրում։